


ԱՐՏԱՇԷՍ ՏԵՐ ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ

**ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ**

**ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ**

(1794 — 1964)



**ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՀԱՅՐԸ**

**ՅԱՐՈՒԹԻՒՆ ՔՂՆՑ. ՇՄԱԻՈՆԵԱՆ**

(1750 — 1824)

ՊԵՏՐՈՒԹ, 1963

## ԵՐԿՈՒ ԽՕՍՔ

Այս գրքոյկը լոյս կ'ընծայուի Հայ մամուլին նուիրում Բ. ցուցահանդէսին առիթով: Ցուցահանդէսը նուիրում է Հայ Անտ. Գոլէնի 40-ամեակին (1923 - 1963) եւ հայ լրագրութեան 170-ամեակին (1794 - 1964): Հաւաքողն ու ցուցադրողն է Արտաշէս Տէր հաչատուրեան: Ցուցադրութեան դրում են 1794-էն մինչեւ հիմա լոյս տեսած 1) Օրաթերթեր, շաբաթաթերթեր, ամսաթերթեր, պարբերաթերթեր եւ տարեգրքեր (ձեռագիր, խմորատիպ, մեքենագիր, վիմատիպ եւ տպագիր), մէկ խօսքով այն բոլորը ինչ որ կ'իյնայ մամուլ անունի ներկայ բմբռնումին տակ. 2) Հայ մամուլի պատմութեան նուիրում ընդհանուր եւ մասնակի ուսումնասիրութիւններ. 3) Հայ նշանաւոր խմբագիրներու նկարներ: Այս բոլորին զումարը հագարի կը հասնի:

11 - 12 էջերուն մէջ տրուած ցուցակը կը ներկայացնէ արտասահմանի հայ մամուլին 1961-ի պատկերը:

# ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

( Հ Պ Ա Ն Ց Ի Կ Ա Կ Ն Ա Ր Կ )

Հայ մամուլի պատմութեան անդրադառնալէ առաջ, հարկաւոր է նկատեմ հակիրճ կերպով մամուլ բառը ստուգարանել: Բառը սկզբնապէս նշանակած է օրինակ մը հանել, տպել: Ժամանակի ընթացքին գաղափարներու յարակցութեամբ այն գործիքը, իմա՛ մեքենան որ կը տպէ, ուրիշ տպագրական մամուլ բացատրութիւնը: Առ տակաին երրորդ ստումով մը — լրագիրները, պարբերականութիւնն ու տարեգրքերը, որնոք կանոնաւոր հրատարակութիւններ են եւ մեծ մասամբ խումբ մը մարդոց մտածումներն ու զգացումները կը փոխանցեն հանրութեան: Այս վերջին իմաստով մամուլն է մեր այսօրուան գաղափարութեան նիւթը, նաեւ ցուցադրութեան ընդգրկած մարդը:

Մամուլի այս սահմանումով եթէ մտենանք պատմութեան, պիտի տեսնենք որ առաջին տպագրուած լրագիրը երեսն եկած է տպագրութեան զրուէն 123 տարի ետք: Իտալիոյ Ֆլորանս քաղաքին մէջ 1563-ին հիմը կը դրուէր առաջին տպագրուած լրագրին՝ Նօրիցիա Սքրիթե անունով: Այնուհետեւ տպագրուած լրագիրներու գործը կը տարածուի ամբողջ Եւրոպայի մէջ: Իտալիոյ օրինակին կը հետեւի Ֆրանսան (1605), Չեիեքիան (1609, Սթրասպուրկ), Աւստրիան (1610), Գերմանիան (1612-15), Անգլիան (1622), Սպանիան (1626), Շուեար (1644) եւ Ռուսիան (1703):

1794ին Հնդկաստանի Մատրաս քաղաքին մէջ հիմը կը դրուէր հայ առաջին լրագրին՝ «Ազդարար» ամսագիր անունով, Տէր Յարութիւն քհնյ. Շմաւոնեանի կողմէ: Ո՞վ էր այս մարդը: Կարժէ հանդամանօրէն անդրադասնայ այս մեծ հայուն կեանքին եւ գործունէութեան:

Անյայտ է հայ լրագրութեան նախահօր կեանքը մինչեւ քահանայութիւն: Միայն յայտնի է, թէ ծնած է Պարսկաստանի Շիրակ

քաղաքը՝ 1750-ին: Քաճահայ ձեռնադրուելէ ետք, մէկ շարժումն մէջ կը կորսնցնէ իր երկու գաւակները: Այս գժրախառնութիւնը խորացէս կ'ազդէ իր վրայ եւ կը բարձրանայ Շիրազէն երկու ժամուան հետաւարութեան վրայ գտնուող Բարաքուճ լեռը: Լեռան վրայ կը գտնուէր Տերվիշներու վանք մը, որոնց կարգը ընդունելով՝ եօթը սարի կը ճզնի: Այդ շրջանին կը տիրապեալ պարսկերէն լեզուին: Ընտանիքին ազաչանքներուն անսալով, կը թողու վանքը եւ կը վերագտնայ Շիրազ: 1784-ին քաճահայական պաշտօնով կը փոխադրուի Մատրաս: 1789-ին ազարան կը հաստատէ, մամուլ մը կը շինէ, տասեր կը փորագրէ, կը ձուլէ եւ ինք կը գտնայ գրաչարն ու տպագրիչը: Այնուհետեւ կը սկսի տպել աւելի կրօնական բնույթ կրօզ տետրեր եւ գրքեր:

Շմաւնեան քհնյ. տեսնել Մատրասի մէջ նոր լոյս տեսնող անդլիական լրագիր մը, իր մէջ կը ծնի պարբերական տետրակի մը հրատարակութեան գաղափարը: 1794 Օգոստոս 9-ին կը հրատարակէ սոց մը, որով կը բացատրէ իր նպատակը. «Նկատելով իմով եքէ գօմանդակութիւն տպարանին եւ եքէ բարեպէս յառաջ եկեալն ուսումնասիրաց, յարմար վարկայ նութիւյ առաջի ձերումդ ազգասիրութեան զխոկմունս նարդեմիս, այսինքն տպեցմամբ ի լոյս ընծայել գտետրակ մի յամենայնում վերջնոյ ամսոյ, անուանեալ «Ազդ Արարող»՝ յորմէ իմացումն ինեւոյց է ընրեքցողաց, ծայրափաղ անցքն նոյնոյ ամսոյ, եքէ ի գանագան կազէրաց, եքէ ի գանագան Բարտիզաց եւ եքէ այլոց գանագան գրոց, նաեւ բանֆ հարկաւորֆ եւ Բաղքարաւորֆ, եւ ի վերջնումն տետրակիս, գորացոյց մի հետեւեալ ամսոյ, պարունակեալ ի նմա գտօնս սրբոց եւ գաւուրս ծննդեան եւ լրման լուսնոյ եւայլն»:

Վերսիլիչեայ ազդէն երկու ամիս յետոյ 1794 Հոկտ. 16-ին լոյս կը տեսնէ «Ազդարար»ի առաջին թիւը: Նոր ամսագիրը կը խանդավառէ Մատրասի երիտասարդութիւնը, որ գոյն օգտակար եւ հետաքրքրական գարձնելու համար կը գործակցի խմբագրին՝ թարգմանութիւններ, տեղեկութիւններ եւ լուրեր հաղորդելով: Աշխատակցութեան համար կը հաստատուի արկղ մը, Մատրասի հաշկական եկեղեցւոյ գանդակատան սակ, սր աշխատակիցներ կը ձգէին իրենց լուրերն ու յօդուածները:

«Ազդարար»ին կու գտն աշխատակցիլ նաեւ Ռուսաստանէն Յովսէփ Աբբ. Արցուիեան (Երկաշնարազուկ) եւ Ստեփաննոս Յովհաննէս Գուլամիրեան, որոնք իրենց ժամանակակից անցքերուն մա-

սին կ'ուղարկեն տեղեկութիւններ: «Ազդարար»ի մէջ հրատարակուած կան Կովկասի եւ Անգրկովկասի անցքերուն, սուսական պատերազմներուն, հայկական անցուղարձերուն, ինչպէս նաեւ Փրանսական Յեղափոխութեան պայքերուն շուրջ տեղեկութիւններ:

Ամսագրին բաժանորդներուն թիւը շատ սահմանափակ էր, ինչ որ պիտի ըլլար իր գաղարման պատճառներէն մին: Հնդկաստանի մէջ ունէր 28 բաժանորդ, Թրքահայաստանի մէջ 10, իսկ Ռուսահայաստանի մէջ բազմաթիւ աւելի լայն շրջաբերութիւն կը գտնէ, Ստեփաննոս Յովհաննէս Գուլամիրեանի ջանքերուն շնորհիւ:

Դժբախտաբար Հայ Առաջին Լրագիրը չկրցաւ գոյատեւել: Երկու տարուան գոյութենէ մը յետոյ կը պայքէր, նիւթական աղբիւրներու չգոյութեան պատճառով: Երկամեայ այդ շրջանին (1794 Հոկտ. 16 – 1796 Փետր.) հրատարակուեցան 18 տետրեր: Ծմաւունեան քՏՆԵՂ. կ'սպրէր տակաւին 30 տարի եւ կը վախճանէր 1824-ին: Իր անունը յաւէտ անմոռանալի է հայ ժողովուրդին համար: Բացած էր նոր ազատ մեր մշակոյթի արտին մէջ եւ շուտով պիտի ունենար իր գործին արժանաւոր շարունակողները թէ՛ Հնդկաստանի եւ թէ՛ Վենետիկի մէջ:

Դժբախտութիւն է, որ մեր ձեռքը չէ հասած Ծմաւունեան քՏՆԵՂ-ի գիմանկարը: Այն ինչ որ կը ներկայացուի որպէս այդպիսին, Վիեննայի Միսիթարեան Հայրերու գործն է, որոնք հայ լրագրութեան հարիւրամեակին առթիւ, 1894-ին, Երեւակայական նկարով մը, սուղեցին սրտուել հայ լրագրութեան նահապետը:

Յատկանշական երեւոյթը հայ լրագրութեան սկզբնաւորութեան այն է, թէ հայ կղերականներն են որ կը ստանձնեն նախաձեռնողի դերը: Տեանք Ծմաւունեան քահանան, որ հիմնեց առաջին հայ թերթը: 1800 թուին, Հ. Ղուկաս վրդ. Ինճիճեան, Վենետիկեան վարդապետն էր, որ կը հիմէր «Տարեգրութիւն» անունով տարեկիւրքը, որ 1803-ին սկսաւ հրատարակուիլ «Եղանակ Բիւզանդեան» անունով եւ շարունակուեցաւ մինչեւ 1820 թուականը: Դարձեալ 1812 թուին Հ. Գրիգոր վրդ. Գապարաճեան հիմը կը դնէր Վենետիկի մէջ «Դիտակ Բիւզանդեան» երկշաբաթաթերթին, որ պիտի շարունակուէր մինչեւ 1816:

1821-ին, Կալկաթայի մէջ Մարտիրոս Մկրտիչեանի խմբագրութեամբ սկսաւ հրատարակուիլ «Շտեմարան»-ը

Թրքահայեր Ռուսահայերէն առաջ կ'արթննան լրագրութեան

գործին մէջ: Յարոյ իր «Հայ Մամուլը» անուն աշխատասիրութեան մէջ, տպուած 1878-ին, խօսելով թրքահայոց հայ մշակոյթի զարգացման, բերած նպաստին, կը գրէ. «Հայոց նոր զրահանութեան, լրագրութեան, մտաւոր շարժման, քաղաքական զարգացման ինչ-չիատիւր (նախաձեռնութիւն) անկասկած Տաճկաստանի հայերին է պատկանում: Նրանք է, որ առաջին անգամ հիմնեցին լրագիրներ ու ամսագիրներ, հրատարակեցին գրքեր ու գրքոյկներ, սկսեցին խօսել հայերի քաղաքական զրութեան վրայ, մի խօսքով՝ առաջին զարկը տուին Հայոց մտաւոր շարժմանը, որի հակահարուածը զգացուեցաւ եւ ուսուսացատակ հայերի մէջ»:

Թէ՛ թրքահայաստանի եւ թէ՛ Ռուսահայաստանի մէջ, հայ լրագիրներու հրատարակութիւնը, հայու նախաձեռնութեան արդիւնքը չէ. երկու պարագային ալ կապուած է Օսմանեան եւ Յարական պետութեանց հետ: Սուլթան Մահմուտի հրամանով Իգմիրէն Պոլիս կը հրաւիրուէր Ալեքսանդր Պլաք անունով Ֆրանսացին և անոր կը յանձնուէր պաշտօնաթերթ մը հրատարակելու պաշտօնը: Կը հրատարակուէր թերթը «Մօնիթօր Օթօման» (Ազգաբար Օսմանեան) անունով եւ հետզհետէ անոր կը կցուէին զանազան բաժիններ: Հայերէն ալ լոյս կը տեսնէր այս թերթը՝ «Լրոյ Գիր Մեծի Տէրութեանն Օսմանեան» անունով, 1832 Յունուար 13-էն սկսեալ: Թերթը զանազան անուանախիտութիւններով պիտի շարունակուէր մինչեւ 1850:

Նոյն պարագաներուն մէջ լոյս կը տեսնէ Ռուսահայոց առաջին լրագիրը: Փոխարքայ իշխան Վորոնցով, հիմնելով ուսերէն «Կովկաս» պաշտօնաթերթը, կ'ուզէ որ հրատարակուի նոյնին հայերէնը: 1846 Յունուար 12-ին լոյս կը տեսնէ առաջին թիւը, խմբագրութեամբ Յակոբ Կարինեանի եւ Միք. Պատկանեանի: Կ'ունենայ 2 տարուան կեանք:

Թրքահայոց բ. լրագիրը կը գառնայ «Շտեմարան Պիտանի Գիտելիաց»ը, որ կը տպուի Չմիւռնիոյ մէջ, 1839-ին, բողոքական միսիոնարներու ձեռքով: Տեւեց մինչեւ 1854: 1855-ին Պոլսոյ մէջ սկսաւ տպուիլ «Աւետարեք»ը, ամբերիկացի բողոքական միսիոնարներու ձեռքով, որ տեւեց մինչեւ Ա. Համաշխարհային Պատերազմ: Այդ օրերուն կը սկսի հրատարակուիլ «Արշալոյս Արարատեան»ը, որ ամբողջ կէս դար (1840-1886), եղաւ հայ լրագրութեան փայլուն աստղերէն մին:

1843-ին, Վենետիկի մէջ սկսաւ հրատարակուիլ, խմբագրութեամբ Հ. Գարրիէլ Այվազովսքիի (նշանաւոր ծովանկարիչին եղ-

բայրը), «Բագմավէպ»ը, որ իր ետին ունենալով ամբողջ միաբանութեան մը կոռուանը, առանց զազարի կը շարունակէ այսօր իր 119-ամեայ ընթացքը:

1846-ին, Պոլսոյ Հայոց Պատրիարքարանը ուղեց ունենալ իր պաշտօնական օրկանը՝ «Սուրհանդակ Կոստանդնուպոլսոյ» անունով, որ ժամանակի ընթացքին փոխուելով առաւ «Հայաստան» – «Մասիս» – «Արեւելք» – «Բիւզանդիոն» անունները եւ տեւեց մինչեւ նախկին Համաշխարհային Պատերազմ: Մենք բախտը ունեցած ենք թղթատելու այս ամբողջ շարքը եւ գտած ենք, որ մեծ արժէք կը ներկայացնէ աշխարհարար լեզուի զարգացման եւ ազգագրական նիւթերու տեսակէտէն: Հրաչեայ Աճառեան իր «Պատմութիւն Հայոց Նոր Գրականութեան» գրքոյկին մէջ խօսելով այս թերթերու շարքին մասին, կը գրէ. «Սուրհանդակ – Հայաստան – Մասիս – Արեւելք – Բիւզանդիոն շարքը, իբրեւ մի անընդհատ յաջորդութիւն, միեւնոյն ուղղութեամբ եւ ոճով շարունակեցին հայերէն լեզուի մշակման գործը: Այդ շարքը, մանաւանդ «Մասիս»ը, Հայ մտքի մեծագոյն աշխատանոցն էր. այնտեղ ստեղծուեցան, առաջարկուեցան, քննադատուեցան, կազմուեցան եւ քաղաքացիութեան իրաւունք ստացան բազմաթիւ հայերէն նոր բառեր, գիտական, գրական, ուսումնական ու հասարակական կեանքի վերաբերեալ բառեր, պաշտօնական լեզուի դարձուածքներ եւ եքէ այսօր հայերս ունինք քիչ շատ մշակուած լեզու, կանոնաւոր գիտական ու պաշտօնական լեզու, այդ պարտական եմք գլխաւորապէս Մասիսին»:

Պատմական հայրենի հողին վրայ առաջին լրացիւրը կ'ըլլայ «Արծուի վասպուրական»ին, որ կը տպուի Խրիմեան Հայրիկի կողմէ՝ 1858-ին, Վարազայ վանքին մէջ: Իր սաներէն Գարեգին վրդ. Սրուանձտեանցի խմբադրութեամբ է, որ հայրենի հողին վրայ երկրորդ լրացիւրը կը հրատարակուի Մշոյ Ս. Կարապետի վանքին մէջ, 1863-ին, «Արծուիկ Տարօնոյ» վերնագրով: Մինչեւ Օսմ. Սահմանադրութիւնը Թուրքիոյ ներքին գաւառներու հայութիւնը պիտի մնար առանց լրացրի: Այդ շրջանին է, որ տպարաններ կը բացուին եւ լրացիւրներ կը հրատարակուին:

Թուրքիոյ ներքին գաւառներու հայ մամուլը կը ներկայացնէր հետեւեալ պատկերը՝ 1911ին. — «Աշխատանք», շարաթաթերթ (Իզմիր). «Բիւրանիա», շարաթաթերթ (Նիկոմիդիա կամ Իզմիր). «Դաշինք», օրաթերթ (Իզմիր). «Նրկիր», շարաթաթերթ (Ատարս-գար). «Նփրատ», երկշարաթաթերթ (Խարբերդ). «Յառաջ», շարաթը երկու անգամ (Կարին). «Նոր Այգ», ամսաթերթ (Մարզուան).

«Պարտիզակ», վեցամսեայ (Պարտիզակ). «Փարոս», ամսաթերթ (Պարտիզակ). «Փեքակ», կիսամսեայ (Կիրասոն). «Անդրանիկ», շաբաթաթերթ (Սերաստիա): (Սահակ-Մեսրոպ, Գալաօրն Տարեցոյցը, Ա. տարի, 1911, էջ 235 - 36):

Գալոյ վովկասահայութեան, «Կովկաս»-ի յաջորդեց Ռուսահայերու երկրորդ թերթը՝ «Արարատ» (1850) թիֆլիսի մէջ, խմբապետութեամբ Գարրիէլ Ա. քհնյ. Պատկանեանի: Թէեւ շատ կարճ տեւեց, սակայն պատիւն ունի Ռուսահայ առաջին աշխարհարար թերթը ըլլալու:

1858-ին Մոսկուայի մէջ սկսաւ հրատարակուիլ «Հիւսիսափայլ»ը, խմբապետութեամբ Ստ. Նազարեանցի եւ Միք. Նալպանտեանի: Թերթը հետաւոր Մոսկուայի մէջ դարձաւ յեղափոխութեան քարոզիչը:

Որքան մօտենանք 20-րդ դարուն, այնքան պիտի տեսնայ Հայ լրագիրներու թիւը եւ հետզհետէ մասնագիտական ուղիներով: Այդ տեսն է, որ Արեւելեան Հայաստանի մէջ պիտի տեսնենք «Փորձ», «Մուրն», «Լուսնայ», «Արարատ», «Ազգագրական Հանդէս», «Արաքս», «Նոր Դար», «Տարագ» օրաթերթերն ու ամսագիրները, իսկ Արեւմտեան Հայաստանի մէջ եւ այլուր «Ծագիկ», «Արեւելեան Մամուլ», «Հայրենիք», «Անահիտ», «Հանդէս Ամսօրեայ», «Ազատամարտ» եւ ուրիշներ: Ասոնք իրենց գոյութիւնը կը պահեն մինչեւ Ա. Համաշխարհային Պատերազմ: Ասոնց մեծ մասը կուլ կ'երթայ պատերազմին, իսկ միւսները կը պահեն իրենց գոյութիւնը:

### ՅԵՏ-ՊԱՏԵՐԱԶՄԵԱՆ ՇՐՋԱՆ

1915-ը, ինչպէս Հայ մշակոյթի բոլոր մարզերուն, նոյնպէս Հայ լրագրութեան կը բերէր անշարացումի շրջան մը, որ պիտի տեւէր մինչեւ 1920-22: Այդ շրջանին, անշուշտ որ լրագիրներ ունինք, սակայն թիւը շատ չէ: Հետզհետէ ամէն գաղութ պիտի ունենայ իր թերթերը եւ այսօր արտասահմանը առանձին ունի 130-ի մօտ օրաթերթեր, ամսագրեր ու պարբերաթերթեր:

Թրքահայաստանի մէջ, ուր տարածուած էր թրքերէնը, հետզհետէ սկսած են լոյս տեսնել հայաստա. թրքերէն թերթեր, որոնց թիւը կը հաշուուի 21: Եւրօպական ազգերու՝ հայկական հարցը ծանօթացնելու մտքով սկսած են հրատարակուիլ Ֆրանսերէն եւ Անգլերէն լեզուներով թերթեր: Իսկ ներկայիս, նոր պայմաններու բերումով, շատցած են անոնց թիւը, որոնք սնունդ կը հայթայթեն Հայ լեզուին անծանօթ հայորդիներուն:



## ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՔԱՆԱԿ

Արդեօք մինչևև մեր օրերը քանի՞ հայկական թերթեր լսյա տեսած են: Կու տանք նիւթին մասնագէտներուն կարծիքները: Գարեգին Լեւոնեան տարիներով մեր մէջ նիւթին մասնագէտը մնացած է: 1894-ին, հայ լրագրութեան հարիւրամեակին առթիւ, հրատարակած «Հայոց Պարբերական Մամուլը» աշխատասիրութեան մէջ, անոնց թիւը կու տայ 173, առաւել 17 հայատառ տաճկերէն թերթերթեր: Գրքին վերջաւորութեան հետեւեալ միամիտ կարծիքը կ'արտայայտէր. «Ներկայիս ընթերցանութեան ծաւալումը կարծել է տալիս, որ հարիւր տարի յետոյ՝ 1994 թուականին, հայ լրագրութեան թիւը կը կրկնապատկուի» (էջ 556): Ան 1934-ին, հայ պարբերական մամուլի նոր ցանկ մը պիտի պատրաստէր եւ պիտի տեսնէր թէ տակաւին 1944-ը չեկած, հայ թերթերուն թիւը զլած անցած էր իր նախատեսութիւնը, ութը անգամով: Ան կը ցուցակազրէր 1600-ի մօտ թերթեր:

Սուրիահայ Տարեցոյցի Ա. տարուան (1924) մէջ տպուած ցուցակի մը մէջ (էջ 270), մինչևև 1924 հայերէն տպուած թերթերուն թիւը կը արուի 650: Ո՞վ է կազմողը եւ ուրի՞՞ք քաղած է այս տեղեկութիւնը, մեզի համար անյայտ է:

Հայր Մկրտիչ Պոստոբեան իր Հայ Հանրագիտակի (1938) յառաջարանին մէջ, ակնարկելով Գարեգին Լեւոնեանի տուած վերոյիշեալ թիւին, զայն կը բարձրացնէր 2600-ի: Ատիկա պարզ գրչի խօսք է, թէ ոչ վիճակազրութեան վրայ կատարուած հաշիւ, մեզի համար կը մնայ անլսի:

Արտաշէս Կարինեան 1956-ին կը հաստատէր, թէ «Իր ծագման օրից մինչևև այսօր հրատարակուած հայ պարբերականների թիւը չորս հազարից աւելի է» (Ակնարկներ Հայ Պարբերական Մամուլի Պատմութեան, Ա. հատոր, էջ 8): Այս վերջին գումարը քիչ մը առասպելական է:

Յովհ. Պետրոսեան, որ եռահատոր ցուցակ մը պատրաստած է (1954-57), կրցած է 2000-ի մօտ թերթեր ձեռքի տակ ունենալ: Մեր կարծիքը տարրեր է: Մօտաւորապէս 2500-2600 թերթեր պէտք է ունեցած ըլլանք:

Հայ մամուլի լիակատար ցուցակ մը անհրաժեշտ է: Յովհաննէս Պետրոսեանի գործը թերի է: Անհրաժեշտ է որ Հայաստան եւ Արտասահման գործակցին, նախ հաւաքելու հայ մամուլի բոլոր հաւաքածոները, ապա անոնց ցուցակը կազմելու համար: Անկարելի է

Հայ մամուլի ճշգրիտ քանակը տալ, եթէ չկատարուի թերթերը մէկտեղելու այս նախապատրաստական աշխատանքը :

### ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՆԵՐԿԱՅ ՔԱՆԱԿԸ

Հայ առաջին թերթէն մինչեւ մեր օրերը հրատարակուող թերթերուն թիւին տեղեկանալէ ետք, անհրաժեշտ է դիտնալ, թէ քանի՞ հայ թերթ լոյս կը տեսնէ Հայաստանի եւ Արտասահմանի մէջ: Դժուար է այս հարցին պատասխանել: Միայն հյակական մեծ մատենադարաններուն պատասխանատուները կրնան ասոր պատասխանել:

Ի՞նչ է Արտասահմանի Հայ թերթերուն թիւը: Մեր պատրաստած ցուցակը 130-ի շուրջ ցոյց կու տայ, մէջը հաշուած հայրենակցական եւ այլ կարգի հրատարակութիւնները:

Շատ ճիշտացանք Հայաստանի ներկայ մամուլին ճշգրիտ քանակը դիտնալու համար, սակայն մեր ջանքերը ապարդիւն մնացին: Այդ պատճառով պիտի դոհանանք 1953-ի քանակը տալով: Յովհ. Պետրոսեան այս մասին կը գրէ. «Այժմ ռեսպուբլիկան սւնի 48 թերթ, որոնցից 8-ը ռեսպուբլիկական, 2-ը քաղաքական, 29-ը շրջնային, 9-ը Փարրիկա-դործարանային: Այդ 48 թերթերից՝ 42-ը լոյս են տեսնում հայերէն, 3-ը՝ ռուսերէն եւ 3-ը՝ աղբրեջաներէն» («Ազգարար», օրաթ., Ա. տարի, թ. 305, էջ 2):

Չենք սխալուիր, եթէ ըսենք որ այսօր անոնց թիւը 50-ի շուրջ է:

Ուրիշ կարեւոր խնդիր մըն է, թէ ի՞նչ է եղած հայ թերթերու տպաքանակը: Դժուար է ասոր պատասխանել, որովհետեւ թերթի պատասխանատուները նման բաներ չեն յայտարարեր: Բայց կարելի է գնահատել: Հայ թերթերը գլխաւորաբար կը սպառին իրենց հրատարակուած քաղաքներուն եւ երկիրներուն մէջ, ուստի լայն սպառում չունին: Անոնց տպաքանակը Արտասահմանի մէջ կը տարուերի 1-3 հազարի միջեւ: Հայաստանի մէջ պետական եւ կուսակցական թերթերը կրնան աւելի տպաքանակ ունենալ:

Արդար է հոս յիշել այն թերթերը, որոնք 50 տարուան կեանք ունեցած են եւ մինչեւ այսօր իրենց գոյութիւնը կը պահեն: Կուտանք անոնց սկզբնաւորութեան տարեթիւը.

«Բազմավէպ» (Վենետիկ) 1843, «Հանդէս Ամսօրեայ» (Վիեննա) 1887, «Հայրենիք Օրաթերթ» (Պոսթրն) 1899, «Երիտասարդ Հայաստան» (Նիւ Եորք) 1903, «Ժամանակ» (Պոլիս) 1908, «Ասպարէզ» (Ֆրէզնօ) 1908, «Հայաստանի Կոչնակ» (1901):

## ՀԱՅ ԽՄԲԱԳԻՒՐՆԵՐ

Մեր դնահատանքի խօսքը ունինք ըսելու հայ խմբադիրներուն, որոնք իրենց խմբադրութեան համեստ սեղաններէն, սերունդներ դաստիարակած են եւ մինչեւ այսօր կը շարունակեն իրենց սըրբազան գործը: Հայ լրագրութենէն անրաժան են անուները (առաջին խմբադիր) հրատարակիչ Տէր Յարութիւն քհնյ. Շմաւոնեանի, Ստ. Նազարեանցի, Կարապետ Իւթիւճեանի, Գրիգոր Արծրունիի, Սյաւճեանի, Արփիար Արփիարեանի, Արչակ Զօպանեանի, Շաւարշ Մխաբեանի, Մանուկ Ասլանեանի եւ տակաւին շարանը համեստ աշխատատուրներու, որոնք ամէն զրկանք կրելով լոյս կ'ընծայեն հայ թերթը:

## ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԳՆԵՐԸ

Ա) Հայ լրագիրները եղած են Հայ աշխարհաբար լեզուի գարգացման օրրանք: ԺԹ. դարու առաջին կիսուն եւ նոյն դարուն երկրորդ կիսուն հրատարակուող թերթերուն բազմաթիւնը, մեզ պիտի բերէր այս հաստատումին: Կամ բազմաթիւն մեր այսօրուան աշխարհաբարին հետ եւ դուք պիտի տեսնէք այն անջրպետը, որ դուրսէն սենի երկուքին միջեւ: Գիտական ըլլալու համար պէտք է մէջբերումներ կատարէինք, սակայն տեղի չգոյութիւնը կը ստիպէ մեզ զուսպ ըլլալ:

Բ) Փորձաքար սկսնակ հայ գրական մշակներուն: Մեր զրոշները, առանձին զրքերու հրատարակութենէն առաջ, աշխատակցած են այդ թերթերուն: Հոն է որ կազմաւորած են իրենց ոճը: Հայ լրագրութիւնը այն թանգարանն է, ուր կը քնանան մեր զրոյներու մեծագոյն մասին գրութիւնները: Այդ թանգարանէն դիտցան օգտուելի «Նահատակ Գրագէտներու Բարեկամներ»ը եւ լոյս ընծայեցին արժէքաւոր շարք մը:

Յարական եւ օսմանեան զրաքննութեան պատճառաւ, զժուար էր առանձին զրքերու հրատարակութիւնը: Թերթերուն հանդէպ աւելի թոյլատու ողի կը ցուցարեւոէր: Մեր զրագէտներուն մեծ մասը այս պատահութիւնը օգտագործած է:

Գ) Գրականութեան ժողովրդականացում: Գրել կարգալը, որ մինչեւ լրագրութեան երեւան դալը, մեծ մասամբ հայ կղերին ձեռքը կը գտնուէր, դարձաւ հայ ժողովուրդին սեփականութիւնը եւ զըզրոցին հետ հայ լրագրութիւնն է որ կրթութեան տարածիչը հանդիսացաւ:

Արտասահմանի մէջ հայապահպանման ղէնքեր կը փնտռենք: Հայ մամուլը, հայ եկեղեցիին եւ զպրոցին կողքին կը ներկայանայ զլիաւոր ղէնքերէն մէկը: Արժէքի այդ պիտակցութեամբ մօտենանք անոր եւ զօրավիզ կանգնինք անոր գոյատեւման:

## ՄԱՏԵՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ ՀԱՅ ԼՐԱԳՐՈՒԹԵԱՆ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Հոս նկատի առած ենք Վլխաւորարար այն գործերը, որոնք Հայ մամուլի ամբողջական ցուցակը ներկայացուցած են կամ վերլուծած անոր ամբողջական պատմութիւնը:

1) Հայր Գարեգին Վրդ. Զարրհանէլեան, Հայկական Մատենագիտութիւն, Վենետիկ, 1883: Երկասիրողը հայ գրքերու կողքին հզանցիկ կերպով կը յիշատակէ նաեւ հայ թերթերը, այրուբենական կարգով:

2) Հայր Գրիգորիս Վրդ. Գալէմքեարեան, Պատմութիւն Հայ Լրագրութեան, Վիեննա, 1893: Կ'ընդգրկէ 1794-1860 տպուած թերթերու ցանկը (232 էջ):

3) Գարեգին Լեւոնեանց (Աշուղ Զիւանիլի սրգին) ունի երեք գործեր, որոնք նուիրուած են այս նիւթին.

ա) Հայոց Պարբերական Մամուլը, Ալեքսանդրապոլ, 1895: Արժանացած է Իգմիրեանց մրցանակին: Լոյս տեսած է հայ լրագրութեան հարիւրամեակին առթիւ:

բ) Լիակատար Յանկ Հայ Լրագրութեան 1794-1904, «Լոյս», Օրացոյց Հանդէս, Ե. Թովչեան, 1905, էջ 595-610:

գ) Հայոց Պարբերական Մամուլը, լիակատար ցուցակ հայ լրագրութեան՝ սիկորից մինչեւ մեր օրերը, 1794-1934, Երեւան, 1934:

4) Հայր Մկրտիչ Վրդ. Պոսուրեան, Հայ Մամուլը Տասնեւհինգ Տարուան Մէջ (1794-1909): Այս գործը Հայր Գալէմքեարեանի գրքին շարունակութիւնը կը հանդիսանայ:

5) Հայր Ռաֆայէլ Վրդ. Կարապետեան, Լիակատար Յուցակ Հայերէն Լրագիրներու, որոնք կը գտնուին Միխրարեան Մատենադարանին մէջ ի Վիեննա (1794-1921), Վիեննա, 1924:

6) Յովհաննէս Պետրոսեան, Հայ Պարբերական Մամուլի Բիւրիոգրափիա.

Հաս. Ա. 1794-1900, տպուած 1956-ին.

Հաս. Բ. 1900-1956, տպ. 1957-ին.

Հաս. Գ. բաշխուած մամուլ, 1902-1954, տպ. 1954-ին:

7) Արտաշէս Բ. Կարինեան, Ակնարկներ Հայ Պարբերական Մամուլի Պատմութեան, Հաս. Ա., 1956, Հաս. Բ., 1960:

Հայ մամուլին նուիրուած այս աշխատութիւնները ցուցադրութեան գրուած են: Մասնակի աշխատութիւններ ալ նկատի առնուած են ԼԼ կը ցուցադրուին իւրաքանչիւր երկրի թերթերուն բաժնին մէջ:

# ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ

## ● ԱՄԵՐԻԿԱ (ՀԻԱ.)

Օրաթ. - Հայրենիք, Պայքար.

Երկօրեայ. - Լրաբեր.

Եռօրեայ. - Ասպարեզ, Երիտասարդ Հայաստան, Նոր Օր.

Շար. - Կոունկ, Մշակ, Նոր Աշխարհ, Շաբաթաբերքիկ, Հայ Աւետ. Եկեղեցւոյ, The Hairenik Weekly, The Armenian Mirror Spectator.

Ա.ժ.ս. - Հայց. Եկեղեցի, Հայաստանի Կոչնակ, Հայրենիք, Զայն, Յուշարար - Միութիւն, Տանար, The Armenian Church, Hoosharar, Pilgrim's Progress.

Պարբ. - Արծուի վասպուրական, Գերմանիկ, Ծիրանի Գօտի, Հայ Սիրտ, Զայն Սեբաստիոյ, Ճրագ, Մայր Եկեղեցի, Նոր Այնթապ, Նոր Արաբկիր, Նոր Խարբերդ, Նոր Կեսարիա, Նոր Մալաթիա, Նոր Սեբաստիա, Պապ-Ուլստի, Վարագ, The Armenian Guardian, The Armenian Review.

Տարեկիւրք - Պայքար.

## ● ԱՄԵՐԻԿԱ (Հարաւ.)

Օրաթ. - Արմենիա.

Շար. - Հայ Կեանք, Շարժում, Սուրհանդակ.

Ա.ժ.ս. - Հայ Կեդրոն, Նաւասարդ, Նոր Հանրն.

Պարբ. - Կալֆ. Revista Armenia.

## ● ԱՒՍՏՐԱԼԻԱ Ա.ժ.ս. - Լոյս, Զայն.

## ● ԱՒՍՏՐԻԱ Ա.ժ.ս. - Հանդէս Ամսօրեայ.

## ● ԵԳԻՊՏՈՍ

Օրաթ. - Արեւ, Յուսաբեր.

Շար. - Արաֆս, Սաւառնակ.

## ● ԵԹԻՎՊԻԱ Պարբ. - Փիւնիկ.

## ● ԹՈՒՐԿԻԱ

Օրաթ. - Ժամանակ, Մարմարա.

Շար. - Արշաւ, Ժողովուրդի Զայն, Կավոօշ.

Երկշ. - Դար, Քուլխս.

Ա.ժ.ս. - Շողակաք, Ս. Յակոբ, Ս. Փրկիչ, Պարտէզ.

Պարբ. - Հանդէս Մշակոյթի, Սան.

Տարեկ. - Երջանիկ (Բաղրաս Թեւեան), Ժողովրդական Տարեգիրք.

● **ԻՏԱԼԻԱ**

*Աժս.* – Բագմավէյ, Ընտանիք.

● **ԼԻԲԱՆԱՆ**

*Օրաթ.* – Ագդակ, Այգ, Արարատ, Զարթօնք.

*Շար.* – Մասիս, Յառաջ, Նայիրի, Նոր Կեանք, Սփիւռք.

*Երկշ.* – Զանաւեր.

*Աժս.* – Ակոս, Արարատ Գրական, Աւետիք, Բժիշկ, Խօսնակ, Հասկ, Շիրակ, Պատանեկան Արձագանգ.

*Պարբ.* – Աւելի Կեանք, Գլաճոր, Լոյս, Կայծ, Հորիզոն, Ճրագ, Նուիրում, Ուսանող, Զահակիր, Պատգամաբեր, Սիփան.

*Տարեկ.* – Ամենուն Տարեգիրքը (*Կարօ Գէորգեան*), Միջնաբերդ (*Պօղոս Սնապեան*).

● **ԿԻՊՐՈՍ**

*Շար.* – Յենարան.

*Պարբ.* – Այգ.

● **ՅՈՐԴԱՆԱՆ**      *Աժս.* – Սիոն.

● **ՅՈՒՆԱՍՏԱՆ**

*Օրաթ.* – Ազատ Օր.

*Շար.* – Երկիր.

● **ՊԱՐՍԿԱՍՏԱՆ**

*Օրաթ.* – Ալիք.

*Աժս.* – Լուսաբեր.

*Պարբ.* – Նոր Էջ.

● **ՊՈՒԼԿԱՐԻԱ**      *Եռօրեայ* – Երեւան.

● **ՌՈՒՄԱՆԻԱ**      *Օրաթ.* – Նոր Կեանք.

● **ՍՈՒՐԻԱ**

*Օրաթ.* – Արեւելք.

*Շար.* – Արեւելք Մարգաշխարհ.

*Աժս.* – Մարանաթա (*Հայ. եւ Թրք.*)

*Պարբ.* – Բարձունք, Հայ Ծերանոց, Նոր Մարաշ.

● **ՖՐԱՆՍԱ**

*Օրաթ.* – Յառաջ.

*Շար.* – Աշխարհ, Խթան.

*Աժս.* – Բանբեր, Զուարթնոց, Հայաստան, Հայ Բոյժ, Շինարար, Le Lumignon, Notre Voix.

*Պարբ.* – Անդառտան, Եկեղեցին Հայկական.

*Տարեգիրք.* – Հայուն Տարեցոյցը (*Վարդան քհնյ. Ժամկոչեան*) :

## ԱՐՏԱՍԱՀՄԱՆԻ ՆԵՐԿԱՅ ՀԱՅ ՄԱՍՈՒԼԸ

	<u>Օրաթ.</u>	<u>Եռօրեայ</u>	<u>Շար.</u>	<u>Երկշ.</u>	<u>Ամս.</u>	<u>Պարբ.</u>	<u>Տարեգ.</u>	<u>Գ</u>
Ամերիկա (Հիւս.)	2	4	6	—	9	17	1	39
Ամերիկա (Հարաւ.)	1	—	3	—	3	2	—	9
Աւստրալիա	—	—	—	—	2	—	—	2
Աւստրիա	—	—	—	—	1	—	—	1
Եգիպտոս	2	—	2	—	—	—	—	4
Եթովպիա	—	—	—	—	—	1	—	1
Թուրքիա	2	—	3	2	4	2	2	15
Իսպիա	—	—	—	—	2	—	—	2
Լիբանան	4	—	5	1	8	11	2	31
Կիպրոս	—	—	1	—	—	1	—	2
Յորդանան	—	—	—	—	1	—	—	1
Յունաստան	1	—	1	—	—	—	—	2
Պարսկաստան	1	—	—	—	1	1	—	3
Պուլկարիա	—	1	—	—	—	—	—	1
Ռումանիա	1	—	—	—	—	—	—	1
Սուրիա	1	—	1	—	2	3	—	7
Ֆրանսա	1	—	2	—	7	2	1	13
	<u>16</u>	<u>5</u>	<u>24</u>	<u>3</u>	<u>41</u>	<u>39</u>	<u>6</u>	<u>134</u>

# ՑՈՒՑԱԴՐՈՒՈՂ ՄԱՍՈՒԼԻ

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՑԱՆԿ

---

*Յարմար դասեցինք այս գրքոյկին մէջ մասնաւոր տեղ մը յատկացնել ցուցադրուող թերթերուն ընդհանուր ցանկին, որպէսզի Հայ մամուլի ցուցակադրութեամբ գրողոց անձերուն ուղեցոյց մը տանք: Այս ցանկէն դուրս ձգուած են ներկայիս լոյս տեսնող թերթերուն անունները, որոնք յիշատակուած են արդէն էջ —ի մէջ:*

ԱՄԵՐԻԿԱ (Հիւս. և Հար.)	Լուսաւորիչ	Հնչակ
Ազգ	Լրատու	Չայն Սերաստիոյ
Ազգ-Պահակ	Ծօ վառ.	Ճրագ
Ամերիկա	Խորհրդ. Հայաստան	Մասիս
Ամբոց	Կանառ	Մարաշ
Արագած	Կալֆ (հիւս.)	Մրգաստան
Արարա	Կալֆ (հար.)	Յոյս
Արարատ	Կայծ	Ջահակիր
Արգէոս	Կանթեղ	Ջահակիր
Արծիւ	Կանթեղ	Ջահակիր
Արփի	Կարմիր Խաչ	Նաւասարդ
Արօր	Կեանց Ճամբան	Նոր Գիր
Աւետագիր	Կոան	Նոր Կեանք — Արօր
Բանուոր	Կոունկ	Նորոգումն
Բուժակ	Կոունկ (հանդէս)	Հայց. Եկեղեցւոյ
Գիտական Շարժում	Հայ.ի Չայն	Նոր Օր
Գիտարանը	Հայ Աւետ. Լրատու	Նոր Թօմարգա
Երեւան Հանդէս	Հայ Բժիշկ	Պայքար (Ամս.)
Եռանդ	Հայ Կ. Խաչ	Պապ-Ուխտի
Զարթօնք	Հայ Մամուլ	Ռահնիւմա
Զուարթնոց	Հայ Մամուլ	Սադայէլ
Լոյս (կրօն.)	Հայ Սիրտ	Սօցիալիստ Հայաստան
Լոյս (գիտ.)	Հայ Վաստակ	Վերածնութիւն
Լուսաբեր	Հայֆ	Տարօնի Արծիւ
Լուսաւորիչ	Հայ Օգն. Միութիւն	Տարոս



Տեղեկատու	Զարթօնք	ԶՈՒԻՑԵՐԻԱ
Տիգրիս		Սօցիալիստ
Յախաւել	ԵԳԻՊՏՈՍ	
Փարոս	Ամսօր · Տեղեկագիրք	ԹՈՒՐԻԻԱ – ՊՈԼԻՍ
Փիւնիկ	Աշխատանք	Ազատամարտ
Փրկութիւն	Աւետարանի Զայնը	Ազդակ
<i>Անդերթնով</i>	Գրասէրի Առաջնորդ	Ազդարար
Armenia	Զարթօնք	Անուշապուր
Arm. Affairs	Զարթօնք	Անուշապուր – Պատկեր
» Bulletin	Ժողովուրդ	Առաւօտ
» Guardian	Լուսաբեր-Արեւ	Առետուր
» Herald	Լուսարձակ	Աստղիկ Արեւելեան
» Review (1928)	Կայծակ	Արագած
» Tribune	Կեանք եւ Գիր	Արամագդ
Echo	Համասպրամ	Արեւելք (օր.)
Forerunner	Հայ Բուժակ	Արեւելք (շաբ.)
Nev Armenia	Հայ Դպրոց (1933)	Արեւելք (երկշ.)
News Bulletin	Հայ Դպրոց (1938)	Աւետաբեր
Union Armenia	Հայ Վարժարան	Աւետաբեր Տղայոց Համար
<i>Տարեգրքեր</i>	Հոսանք	Բանասէր
Ամերիկ · Հանրագիտ. (1913)	Հունձք	Բանբեր Պարտիզակեան
Ամերիկահայ Հանրագիտակ	Հրեղէն Սիւն	Բարձրավանք
Արշալոյս	Մալէշ	Բիւզանդիոն
Զուարթապատում	Միութիւն	Բիւքանիա
Հայ Կեդրոն	Յուսաբեր (Ամս.)	Բիւրակն (գրակ.)
Հայրենիք	Նոյեան Ազաւնի	Բիւրակն (տեւտր.)
Հնչակեան	Նոր Սերունդ Մշակոյթ	Բժիշկ
Վերելք	Նոր Շարժում	Բուրաստան
Վտակ	Որբունի	Բուրաստան Մանկանց
ԱՆԳՂԻԱ	Սկաուտին Զայնը	Բուրաստան Ս. Սահակեան
Դադափար	Փունջ	Գիտական Շարժում
Նոր Կեանք		Գիւղատնտես
Վաղուան Զայնը	<i>Տարեգրք</i>	Գրակ. եւ Իմաստասիր.
Ararat	Եգիպտահայ (1926)	Շարժում
Massis	Եգիպտահայ (Պարթեւեան)	Դարման
ԳԵՐՄԱՆԻԱ	Կեանք եւ Գիր	ԵՆՆԻ Իօմբ
Հայաստան	Զահակիր	Երեւակ
	Սարկաւագին	Երկիր

Երկունք	Հայ Խօսնակ	Շիրակ (գրակ․)
Երկրագունտ (1865)	Հայ Խօսնակ (1941)	Շիրակ (առեւտր․)
Երկրագունտ (1870)	Հայ Խօսնակ Մանկանց	Ոստան
Զարթօնք	Հայ Դպրոց	Ուսանող
Թատրոն	Հայ Կին	Պատկեր (1890)
Թօ	Հանրագիտակ	Պատկեր (1927)
Ժամանակ Հանդէս	Հայ Պատանի	Պարբ
Հաշտենից	Հայ Սկառուտ (1914)	Պարտիզակ
Իգնատ Աղա	Հայ Սկառուտ (1918)	Ռուզմամէ Մասիսի
Իրաւագէտ	Հի-Հի-Հի	Ռուզմամէի Մէմօնայէ
Իրաւունք	Հոս-Հոս	Հաւատիս
Լոյս (Երգիծ․)	Զայն Հայրենեաց	Սոյսակ
Լոյս (Փափագեան)	Ճակատամարտ	Վաստակ
Լոյս (Անտոնեան)	Ճակատամարտ (գիւղատրն-վարագայի Հաւատիս	Վերածնունդ
Լուսարձակ	տեսական)	Տանար
Լոյս Շաբ․ Կանանց	Ճակատամարտ (մանկա-վերջին Լուր	Տանար Մանկանց
Լրոյ Գիրք	վարժական)	Տնտես
Խարագան	Ճաշակ Ոսկեղ․ Դպրութեան	Փարոս
Խելօք Դաւիթ	Ճառագայթ	Փեքակ
Խիկար	Մամուլ	Փիւնիկ
Խօսնակ Հայց․ Եկեղեցւոյ	Մանանայ	Փնջիկ
Ծաղիկ (Անտոնեան)	Մասիս (օր․)	Փունջ Օրագիր (1869)
Ծաղիկ (Զօլանեան)	Մասիս (Ամս․)	Փունջ
Ծաղիկ (Զիլինկիրեան)	Մարմնամարգ	Փունջ (նոր շրջան)
Ծաղիկ (Զաւեշտաք-Երթ)	Մեղու	Քանի
Ծիլն Աւարայրի	Մեհեան	Օրագիր Ծիլն Աւարայրւոյ
Կայծ	Մենմուայէ Հաւատիս	Օրէնք
Կառափնատ	Միմոս	Ֆէլէք
Կաւէ Արձան	Մօտա	Տարեգիրք
Կարդացէք Զիս	Յայտարար Գիր Լրոյ	Անկուտիի
Կափոջ	Յոյս	Ապուշներու
Կափոջ (նոր շրջան)	Նոյեան Աղաւնի	Առաստի
Կեսուր	Նոր Լուր	Արմաղան
Կիլիկիա (բժշկական)	Նոր Հայաստան	Բժշկական
Կոհակ	Նոր Հոսանք	Գիւլատնտեսի
Կամիթներ Սկիւտարցիներ-րուն	Նոր Օր	Գրականի
Կրթարան	Շանք	
	Շեփոր	

Երգիծական (Օտեան)	Հայկունի	Արարատ (Մարգ․)
«Երեւան»ի	Ճշմարտութիւն	Արեւ
Զուարթնոց	Մենտոր	Արփի
Թէոդիկ	Յոյս	Աւետաբեր
Ժողովրդական	Պոնտոս	Բանուորական Միութիւն
(Պէրպէրեան)	Սլաֆ	Գիրք Գրականութեան Եւ
Ժողովրդական (1949)	Վանտոսպ	Արուեստի
Լոյս	Փարոս	Գրական Կայծեր
Կավոօշի (1911)	Փեթակ	Երիտասարդ Հայուհի (հին)
Կավոօշի (1948)	Արարա	Երիտասարդ Հայուհի (նոր)
Կիկօ	Նոր Սերունդ (հմոր․)	Զանգուլ
Հայկաշէն	Նոր Սերունդ	Զարթօնք Սփոր
Հայուն (Ս․ Մեսրոպ)	Տարոս	Զարթօնք (արար․)
Հայրենի (Ս․ Մեսրոպ)	ԻԶՄԻՐ	Էֆնոմֆա
Հոս-Հոսի	Արեւել․ Մամուլ	Ժողովածու
Մեր Տարեցոյցը	Արշալոյս Արարատեան	Ժողովուրդ
Միմոս	Արփի Արարատեան	Ժողովուրդի Զայն (Շար․)
Մշակոյթ	Դափնի	Ժողովուրդի Զայն (Օր․)
Նաւասարդ	Հայ Գրականութիւն	Ժողովուրդի Զայն (Ամս․)
Ուսանողաց	Միութիւն Հանդէս Հաշտե-լաստ	Իշամեղու
Սիրահարներու	նից	Լիբանան
Սուրբ Փրկիչ (հին)	Մուսայֆ	Լոյսի ժառանգ
Սուրբ Փրկիչ (նոր)	Շտեմարան Պիտանի Գի-լրատու	Խարոյկ
Տարեցոյց (Ղազարեան)	տելեաց	Խօսնակ
Տարեցոյց (1914)	<i>Տարեգիրք</i>	Ծիածան
Տարեցոյց Լիլա	Եղանակ (1839)	Ծիլ
Օրացոյց (Պապիկեան)	ԼԻԲԱՆԱՆ	Կայծ
Օրացոյց - Տօնացոյց	Ազդակ (Շար․)	Կրթասիրաց
ԳԱԻԱՌ	Ազդակ (Մարգ․)	Հայ Գիր
Ալեակ	Ազդարար (Շար․)	Հայ Կեանք
Ապառաժ	Ազդարար (Օր․)	Հայ Մանուկ
Արծիւ վասպուրականի	Այգ (ձեռագիր)	Հայ Ուսանող
Արծուիկ Տարօնոյ	Այգ (խմորատիպ)	Հայ Պատանի
Բողբոջ	Անի	Հասկաֆալ
Դէտ	Առաւօտ	Հարուածային
Եփրատ	Արարատ (Բացառիկ)	Հոս-Հոս
Կոչնակ		

Հրճից	Շնորհաց Յօղեր	ԿԻՊՐՈՍ
Ճեմ Արի	Ոսկեգետակ	Գրասէր
Մեր Կեանքը	Սիփան	Նոր Արաֆս
Յարդգող	Սարիսահայ (Պալեան)	Կիպրահայ Տարեգ.
Նախաֆայլ	ՀԱՅԱՍՏԱՆ	ՀՆԴԿԱՍՏԱՆ
Նոր Աշխարհ	Սամաթրա	Ազգասէր
Նոր Կեանք	Սպանիոյ Կղզիք	Ազգարար
Նոր Ուղի	Իրանի Գիւղեր	Բանասէր
Նոր Սինեմա	Գրական Քերթ	Նոր Ազգարար
Նոր Փիւնիկ	Երեսան	ՅՈՒՆԱՍՏԱՆ
Շարժում	Էջմիածին	Արիֆ
Ովասիս	Ժողովրդ. Լուսաւորութիւն	Արամազդ
Որբաշխարհի Աստղը	Լեւինեան Ուղիով	Արեւելք
Պրիամակ	Խորհրդ. Հայաստան	Արձագանգ
Ջահակիք	Խորհրդ. Գրականութիւն	Երկունք
Սահակ Մեսրոպ	Հայաստանի Ֆիզկուլտուր-	Հորիզոն
Սիհուն	նիկ	Նայիրի
Սինէ Աշխարհէն	Ղափան	Նոր Կեանք
Սինէ Վէպ	Նորք	Նոր Սերունդ
Սինէ Սօք	Ոգնի	Նոր Օր (Օր.)
Սիփան	Պատմաբանասիրական	Նոր Օր (Պարբ.)
Սիփոք	Հանդէս	Պատգամաբեր
Սուրբ Մեսրոպ	Պիոներ	Փասաքեմբօ
Վերելք	Պիոներ Կանչ	Փունջ
Տուն	Պիոներական Տօնը	Օլիմբոս
Յայգալոյս	Սովետ. Գրականութիւն	L'Arménie
Փարոս	Սովետ. Դպրոց	Տարեգ. Յունահայ
Փիւնիկ	Սովետ. Հայաստան (Օր.)	ՊԱՂԵՍՏԻՆ
Փորձ	Սովետ. Հայաստան (Ամս.)	Երուսաղէմ
Lipanan	Սովետ. Մանկավարժ	Երուսաղէմ
Horizon	Հայկական ՍՍՌ Գիտու-	Երուսաղէմ
<i>Տարեկիբք</i>	րիւններու Ակադեմիա-ժառանգաւոր	
Ամենուն Նոր (Տօլպագեան)	յի Տեղեկագրեր (Կեն-Կեանք եւ Գիտելիք	
Լիբանահայ Պատկ. Օրա-	սարանական, հասարա-Հայ Դիտակ	
ցոյց	կական, քեֆնիֆական, Հայ Սֆաութ-	
Հայագիտական Հասկ	ֆիմիական, փիզիք-Հ. Մ. Ը. Մ.	
Հայրենի Օրացոյց	մաքեմաքիֆական, Եր-Միութիւն	
Հոս Հոսի	րարանական) :	Չամ-Թաղ

Ովասիս  
Պատգամաւոր  
Սիոն (հիմն)  
ՊԱՐՍԿԱՍՏԱՆ  
Ալիք (Ամս.)  
Այգ  
Առաւօտ  
Արմենուհի  
Արշալոյս  
Արուսեակ  
Արփի  
Բորոխ  
Գաղափար  
Գործ  
Զանգակ  
Իրանի Աշխատաւոր  
Լոյս  
Հորիզոն  
Ղարաբաղ  
Մինարէք  
Միսք  
Նաւասարդ  
Նոր Հասկեր  
Նոր Զուգայի Աւետարեք  
Նոր Պատգամ  
Շախդ  
Պահակ  
Վերածնունդ  
Յախաւել  
*Տարեգրքք*  
Պարսկահայ  
✓ ՊԵՆՃԻՔԱ  
✓ Գիտութիւն  
ՊՈՒԼԿԱՐԻԱ  
Ազատ Խօսք  
Գրութեան Խաչի Օր  
Խոռովք

Հայաքերք  
Հայաստան  
Հայեղի Աշխարհի  
Մեղու  
Մրգաստան  
Ուսումնարան  
Պալանեան Մամուլ  
Պարտէզ  
Տարօնի Արծիւ  
*Տարեգրքք*  
Հայկարան  
Պուլկարահայ  
ՌՌԻՄԱՆԻԱ  
Գարուն  
Գիտութիւն - Գիտելիք  
Կակոն  
Հայաստանեան Ճակատ  
Հայ Մամուլ  
Հրագրան  
Նաւասարդ  
Նորավէպ  
Նոր Արշալոյս  
*Տարեգրքք*  
Հայրենի  
ՌՌԻՍԻԱ - ԿՈՎԿԱՍ  
Ազգագր. Հանդէս  
Ալեմգիր  
Ազբիր  
Աշխատանք  
Առողջապահական Թերք  
Արարատ  
Արարատ (Էջմիածին)  
Արաքս  
Արշալոյս  
Արօր  
Բանբեր  
Գործ

Երկիր  
Ժամանակ  
Ժայռ  
Ի Զէն  
Հումայ  
Ծիլն Աւարայրի  
Կովկաս  
Կովկասի Առաւօտ  
Կռունկ Հայոց Աշխարհի  
Համբաւաւոր  
Հայկական Աշխարհ  
Հանդէս Գրականական Եւ  
Պատմական  
Հասկեր  
Հիւսիս  
Հիւսիսափայլ  
Հովիտ  
Հովիւ  
Հորիզոն  
Ճոսփաղ  
Մանկավարժանոց  
Մարտ  
Մշակ  
Մուրն  
Նոր Գար  
Նոր Խօսք  
Ոստիկ  
Վտակ  
Տարագ  
Ժորճ  
*Տարեգրքք*  
Գարուն  
Գեղարուեստ  
Լոյս  
ՍՈՒՐԻԱ  
Ազգ. Խամանիկներ  
Առաքեալք

Աւարայր	Վահագն	Արագած (Շաբ․)
Բամբին	Տարագիր	Արագած (Երկշ․)
Բուրատան	Տարօնի Արծիւ	Արագած (Պարբ․)
Գրասէր	Տեղեկատու	Արածանի
Գիտական Շարժում	Փունջ	Արաֆս
Դէպի Երկիր	Քրիստոնեայ Գործաւոր	Արեւմուտք
Եփրատ	Le Réveil du Sandjak	Արձագանգ Փարիզի
Զարգացի՛ր	<i>Տարեգրքեր</i>	Արձագանգ շքմարտուրեան
Զարթօնք	Արեւելք	Արմենիա
Զարթօնք (Փրանս․)	Դամասկահայ	Բանասէր
Խաչքուն	Մանանայ	Բանբեր
Լոյս	Սասուն	Բուժանք
Կանքեղ (1932)	Սուրիական Ալպում	Գուրան
Կանքեղ (1952)	Սուրիահայ	Գիտութիւն
Կալոօշ (Պապօշ, Լիլա, Եւլյոյ․ 29, Հոռոփի Շա- բարբ, Ծաղիկներ)	Տարե- Տարօն	Գիւրջակ
Կեանք	Տիգրիս	Երկունք
Հայ Ծերանոց	ՎՆՆՆՏԻԿ	Երեւան
Հայկազն	Գեղունի	Զանգ
Հայ Զայն	Գիտակ Բիւզանդեան	Զէյթուն
Հայ Պատանի	Եղանակ Բիւզանդեան	Զուարթնոց (Ամս․)
Հայրենասէր Պատանի	ՎԻՆՆՆԱ	Զուարթնոց (Պարբ․)
Հիսթորիա	Արեգ	ժողովուրդ
Հոս-Հոս	Երոպա	Լոյս Փարիզի
Մշակույթ	ՅԲԱՆԱՆ	Լուսարաց
Յոյս	Ազատամարտ	Լուսաղբիւր
Նայիրի (Ամս․)	Ազատ Խօսք	Խարտոց
Նոր Աւետարեք	Ազգ	Կալոօշ
Նոր Աւետարեք (բրբ․)	Ամսօրեակ	Կէս-Կատակ, Կէս-Շիտակ
Ռատում	Հայ Կար-Ամբոց	Կովկաս
Պարբերաբերք- Առաջնորդարանի	Այսօր	Հանքն
Պարման	Անահիտ (հին)	Հայ Արի
Սեւան	Անահիտ (նոր)	Հայաստանի Զայն
Սուրիա	Ազազայ	Հայեյի Աշխարհի
Սուրիական Մամուլ (Երկ․)	Ազատակ	Հայկաշէն
Սուրիական Մամուլ (Ամս․)	Առողջ Կեանք	Հայ Կամաւոր
		Հայ Կեանք
		Հայ Սիրտ
		Հ․ Մ․ Բ․ Մ․

Հնչակեան Մամուլ  
 ՀՕԿ  
 Յօդ  
 Մասեաց Աղանի  
 Մարտկոց  
 Մենք  
 Մեր Տունը  
 Միութիւն  
 Մշակոյթ  
 Նայիրի Աշխարհ  
 Ներկայ  
 Նոր Աշխարհ  
 Նոր Երկիր  
 Նոր Կեանք

Նոր Հասարակ  
 Ուսանող  
 Ջանք  
 Վերածնունդ  
 Վերապրիլ  
 Վերելք  
 Վէմ  
 Տարագիր  
 Օշական  
*Ֆրանսերէն*  
*Aiguillon*  
*Bulletin Arm.*  
*de l'Union des*  
*Médecins Arméniens*

*Haïastan*  
*La Voix de l'Arménie*  
*Notre Voix*  
*Paris .. Levant Médical*  
*Revue des Etudes Arméni-*  
*ens*  
*Տարեկրքեր*  
 Զուարթնոց  
 Կեանք եւ Արուեստ  
 Կալոսոշ  
 Հայուն  
 Շնորհաց Յօդեր  
 Փարիզահայ  
 Ֆրանսահայ



Արդար է որ հոս յիշատակենք անունները այն հաստատութիւններուն եւ անհատներուն, որոնք սիրայօժար մեզի տրամադրած են մեր հաւաքածոյին պակասող բերքեր եւ զրբեր :

ԿՈՒ ՏԱՆՔ ՔԱՆԱԿԻ ԿԱՐԳՈՎ

Ճեմարան	63
Հայկագեան Գոլէն	23
Անթիլիասի Մատենադարան	32
Պրն. Արտաշէս Տէր Գէորգեան	200
Պրն. Գրիգոր Պողարեան	98
Պրն. Միհրան Սէփէրեան	34
Անճնական հաւաքածոյ	600
<hr/>	
Ընդհ. Գումար	1050

2012

4819

# ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍ

ՆՈՒԻՐՈՒԱԾ ՀԱՅ ԱՒԵՏ. ԳՈՂԷՃԻ 40-ԱՄԵԱԿԻՆ (1923—63)

ԵՒ ՀԱՅ ՄԱՄՈՒԼԻ 170-ԱՄԵԱԿԻՆ (1769—1964)

ԿԸ ՑՈՒՑԱԴՐՈՒԻ ՇՈՒՐՋ 1100 ԹԵՐԹ

ՑՈՒՑԱՀԱՆԴԷՍԸ ԲԱՑ Է ՍՄԷՆ ՕՐ	Կ. Ե. ԺԱՄԸ 4 — 9
ԻՍԿ ԿԻՐԱԿԻ ՕՐ	Կ. Ա. ԺԱՄԸ 10 — 12
	Կ. Ե. ԺԱՄԸ 4 — 9

Ցուցահանդէսի վայր՝ ՀԱՅ ԱՒԵՏ. Ա. ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՀԱՆԴԻՍԱՐԱՀ (ՄԷՔՍԻՔ ՓՈՂՈՅ) :

ԳԻՆ 1 ԼԻՔ. ՈՍԿԻ

ՀԱՍՑԷ

Mr. ARDACHES DER KHATCHADOURIAN

Karm-el-Zeytoun, No. 23

Achrafié, Beyrouth

LIBAN